

## ԳԼՈՒԽ Բ.

### ՕԶԱԿՈՄԻ ՕՐԵՐԸ

Յեղափոխութիւնը չըջեց ամէն բան:

Յարական գահի փլատակների հետ միասին յեղափոխութեան ալիքը դուրս չպրտեց և կովկասեան սատրապներին: Անխառունակ ու դողալով՝ փախաւ Թիֆլիսից փոխարքայ Նիկոլայ Նիկոլայեւիչը իր բոլոր արբանեակներով ու ռուսացման ծրագիրներով: Յեղափոխական իշխանութիւնը հետը բերեց նոր գաղափարներ, նոր ոգի ու նոր գործելակերպ:

Ժամանակաւոր Կառավարութեան մարտ 9-ի որոշումով Անդրկովկասի համար կազմեց յատուկ իշխանութիւն Անդրկովկասեան Առանձին Կոմիտէ, կամ, կրճատուած, Օդակոմ անունով: Յետագային, սեպտ. 3-ին գրի առնեցին նրան տրուած ղեկավար «հրահանգները», որոնք հետեւեալն էին. «1. Իր գործունէութեան մէջ Առանձին Կոմիտէն անմիջապէս ենթարկելու է ժամ. Կառավարութեան: 2. Առանձին Կոմիտէի մէջ կենտրոնանում է Անդրկովկասի բոլոր քաղաքական գործերի տեղական բարձր վարչութիւնը: 3. Կոմիտէին յանձնուած իշխանութեան հուրիւնը բացառապէս գործադիր է: Առանձին Կոմիտէն չի կարող իր իշխանութեամբ սահմանել ո՛չ մի նոր օրէնք կամ վերացնել գոյութիւն ունեցող որևէ օրէնք: 4. Առանձին Կոմիտէի իրաւունքները և պարտականութիւնների շրջանը երկրի կառավարութեան գործում որոշում են կովկասեան փոխարքայութեան օրէնքներով, ա՛յն սահմանափակումով, որ Առանձին Կոմիտէի իշխանութիւնը տարածուած է միայն Անդրկովկասեան նահանգների ու շրջանների վրա»:

Սկզբում, Օդակոմը ունէր աւելի անորոշ ծրագիր. «Ապահովել իրականացումը խղճի ազատութեան՝ կազմակերպելով բոլոր դաւանանքների հողերը գործերը. 2. Սահմանել երկիրը կառավարելու կարգ՝ նրա կեանքի բոլոր շրջաններում՝ հայրենիքի ծառայութեան կոչելով տեղական հասարակական ուժերը. 3. Նոր կարգի պահանջների համապատասխան՝ վերակազմել քաղաքային ինքնավարութիւնը և միջոցներ ձեռք առնել, որպէսզի անմիջապէս ռամկավար սկզբունքներով գաւառական ինքնավարութիւններ մտցեն, ընտրովի հաշտարար դատավարութիւն հաստատել և վերակազմել գիւղական խիստ թերի դատարանը»: Այլ և միջոցներ ձեռք առնեն՝ կարգաւորելու հողային, աշխատանքի, հաղորդակցութեան և այլ խնդիրները:

Այսպիսի լիազօրութիւններով օժտուած՝ Անդրկ. Առանձին Կոմիտէն, մարտ 16-ին, հասաւ Թիֆլիս, ուր գտաւ արտակարգ խանգալաւ ընդունելութիւն սօցիալ-դեմոկրատիկութեան բոլոր խաւերի ու կազմակերպութիւնների